ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

N 04-Տ «06» 04 2026 թ.

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-Ի

# ՈՐՈՇՈՒՄ

թիվ 04-Տ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակից «ԳԱՐ ԳՐԻԳ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4. | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 | 5 | Բանվորական ձեռնոց | 350,000.00 | «ԳԱՐ ԳՐԻԳ» ՍՊԸ | 09215506 | Արարատի մարզ, Նոր Խարբերդ 1ին փ., 2/3 | 17.03.2026թ. | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ | «ԳԱՐ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ թիվ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում Հայտարարություն» փաստաթուղթը հաստատված չի եղել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, ինչպես նաև ներկայացված հայտում բացակայել է Հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող» փաստաթուղթը: Դրանով պայմանավորված և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, 2026թ. մարտի 13-ին Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Այնուհետև՝ 2026 թվականի մարտի 17-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ԳԱՐ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները՝ դրանով թույլ տալով գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: |

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ    Բ. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կ.Տ.